

են՝ առնչուելով Հիմնականում Ջրուանի գոյութեանը եւ ուսմունքին:

Ջրուանն իրանական ղրցաբանութեան մէջ ոչ միայն անսահման (անվերջ) ժամանակի, այլեւ ճակատագրի աստուածն էր¹⁶:

Անդրադառնանք ճակատագիր հասկացութեան մեկնաբանութեանը միջինիրանական ամենանշանաւոր գործերից մէկում, որը կոչուում է «dādestān I mēnōg I xrad»¹⁷: Գրքի 24-րդ գլխում կարդում ենք. «Իմաստունը հարցնում է բանականութեան Ոգուն՝ հարստութեան տիրանալու, բարի գործեր կատարելու եւ արժանիքների համար աստուածները մարդկանց տալի՞ս են ինչ-որ բան»: Ոգին պատասխանում է. «Տալիս են, եւ դա այն է, որ անուանում են ճակատագիր եւ նախասահմանութիւն. բաշխում են այն, ինչ որ լինում է սկզբում՝ ճակատագիրը, յետոյ՝ նախասահմանութիւնը»¹⁸: Բնագրում ճակատագիրը արտայայտուած է baxt, իսկ նախասահմանութիւնը՝ baYōbaxt բառով: Ահա մի հատուած էլ 27-րդ գլխից. «Երկրային բոլոր գործերն առաջանում են ճակատագրի կանխորոշմամբ... որն ինքը Ջրուանն է՝ հզօր եւ երկարածամկէտ կառավարիչը»¹⁹:

Աւելորդ չենք համարում նշել, որ բախտ բառի արմատն է իրանական bag/baž-ը. «բաժանել, բաշխել», որի անցեալ դերբայն է գնդ. baxta=սանս. bhakta՝ բախտն ըմբռնելով իբրեւ ի վերուստ բաշխուած, բաժանուած վիճակ» (տե՛ս Արմ., Բախտ բառայօդուածը): Իսկ Եզնիկն էլ կարծում է, որ չպէտք է հաւատալ «ի բաշխս բախտից» (II, ԺԲ):

16 St'ya *История Древнего Востока*; М., 1999, с. 440, նաեւ՝ Գ. Սարգսեան, *Պատմագիտական հետազոտութիւններ*, Երեւան, 2006, էջ 109:
17 St'ya *Зороастрийские тексты. Суждения духа разума (Дадестан-и меног-и храд)*, издание подготовлено О. М. Чунаковой, М., 1997:
18 Նոյն տեղում, էջ 99:
19 Նոյն տեղում, էջ 100:

Ամփոփենք: Եզնիկի՝ «Ջրուան ոմն անուն էր, որ թարգմանի բախտ կամ փառք» նախադասութեան մէջ բախտ-ը ոչ թէ Ջրուան անուան ստուգաբանութիւնը կամ թարգմանութիւնն է, այլ նրա՝ որպէս աստուած (կամ մարդու) դերի, գործունէութեան մատնանշումը:

Ինչ վերաբերում է Եզնիկի գրքի յիշեալ հատուածի փառք-ին, ապա այն նոյնպէս չպէտք է դիտել Ջրուան բառի թարգմանութիւն, այլ նրա աստուածային էութեան բնութագրիչներից մէկը: Եզնիկը քննադատում է Ջրուանի պաշտամունքը նաեւ այն բանի համար, որ եթէ նա կատարեալ լինէր, ինքը կը ստեղծէր երկինքն ու երկիրը եւ զոհ չէր մատուցի որդի ունենալու համար: Բացի դրանից, բերում է նաեւ զրադաշտականների պատասխանը. «Փառաց առնէր դյաշտն» («Փառքի համար էր զոհ անում». Եզն., 96-97):

Փառքը, փառաւորուելը խորթ չեն աստուածներին եւ ոչ միայն զրադաշտական: Եզնիկի «Եղծ աղանդոց Հեթանոսացն» գրքում կարդում ենք. «Ո՛ր մեղ է վասն կուրութեանդ. դորա՞, թէ ծնողաց իւրոց, եւ նա ասէ՝ թէ ոչ դորա եւ ոչ ծնողաց իւրոց, այլ վասն փառացն Աստուծոյ, զի փառաւորեսցի ի դմա Աստուած», «այլ աստուած փառքի համար է այդ, որ աստուած դրանով փառաւորուի» (էջ 64-65):

Աստուած փառաւորմանն են նուիրուած այսօր էլ գործածական «փառք քեզ Աստուած», «փառք Աստուած», «փառքդ շատ Աստուած» եւ նման բառակապակցութիւններ:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ ՏԱՂԵՐԻ, ԳԱՆՁԵՐԻ ՆՈՐԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄ ԵՒ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆ

Արմինէ Աւետիսեան

Սոյն յօդուածում փորձ ենք արել Հնարաւորինս վերլուծել Նարեկացու ստեղծած նորաբանութիւնների ձեւութային-բառակազմական նկարագիրը՝ նպատակ ունենալով պարզել գրաբարի բառակազմական Հնարաւորութիւնները Ժ. դարում, եւ Նարեկացու անհատական-ստեղծագործական դերը Հայերէնի բառապաշարի հարստացման գործում:

Տաղերում եւ գանձերում եղած նորաբանութիւններն առանձնացրել ենք՝ ուսումնասիրելով Ե.-ԺԱ. դարերի մատենագրութիւնը «Հայ մատենագրութեան թուանշային գրադարանի» միջոցով եւ աշակցութեամբ¹: Նախ՝ կազմել ենք տաղերի եւ գանձերի թուային տարբերակն Արմինէ Քեօշկերեանի կազմած ժողովածոյի Հիման վրայ², այնուհետեւ՝ համակարգչային ծրագրի օգնութեամբ կազմել ենք տաղերի եւ գանձերի համաբարբառն ու յաճախականութեան բառարանը: Ստացուած ողջ բառապաշարը փնտրողական ծրագրի միջոցով ուսումնասիրել ենք «Հայ մատենագրութեան թուանշային գրադարանում»: Այն բառերը, որոնք մատենագրութեան մէջ Նարեկացուց առաջ չեն հանդիպում, համարել ենք Նարեկացու նորաբանութիւններ, որոնք ստուգել ենք ՆՀԲ-ի էլեկտրոնային տարբերակում, ինչպէս նաեւ՝ այլ բառարաններում:

Բառամաստային համակարգի զարգացումն առաջին Հերթին պայմանաւորուած է նորակազմութիւնների կամ նորաբանութիւնների առկայութեամբ: Նորաբանութիւնների մէջ կարեւոր տեղ են զբաղում հեղինակների կողմից ստեղծուած բառերը՝ հեղինակային նորաբանութիւնները, որոնք մեծ արժէք ունեն բառապաշարի հարստացման գործում: Այս առումով անչափ կարեւոր է Գրիգոր Նարեկացու դերը:

Սոյն ուսումնասիրութիւնն ուղղուած է Հայ լեզուաբանութեան մէջ գրեթէ չուսումնասիրուած մի խնդրի՝ Գրիգոր Նարեկացու տաղերում եւ գանձերում եղած նորաբանութիւնների յայտնագործմանն ու քննութեանը:

Ուսումնասիրութեան Հիմնական նպատակներն են՝

- Ա. Գիտականօրէն արժեւորել Հին Հայերէնի բառաստեղծման Հնարաւորութիւններն ըստ Նարեկացու նորաբանութիւնների:
- Բ. Կատարել նորաբանութիւնների բառակազմական կաղապարների դասակարգում:
- Գ. Քննել Ժ. դարի Հայերէնի բառամաստային առանձնայատկութիւնները:
- Դ. Առանձնացնելով եւ ուսումնասիրելով նորաբանութիւնները՝ նպաստել մեծ բանաստեղծի լեզուամտածողութեան իւրօրինակ դրսեւորումների բացայայտմանը:

Նարեկացու տաղերի եւ գանձերի ուսումնասիրութեամբ զբաղուել են միջնա-

1 Հայ մատենագրութեան թուանշային գրադարան, <http://www.digilib.am>:
2 Գրիգոր Նարեկացի, *Տաղեր եւ գանձեր*, աշխատասիրութեամբ Արմինէ Քեօշկերեանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981:

դարից սկսած (Գեորգ Սկեռացի), իսկ աւելի ուշ ժամանակներում՝ Հ. Նալբանը, Գ. Աւետիքեանը, Մ. Պոտուրեանը, յետագայում նաեւ՝ Մ. Աբեղեանը, Ա. Չոպանեանը, Ն. Պողարեանը, Մ. Մկրեանը, Վ. Առաքելեանը, Գ. Պըլտեանը, Ա. Ղազինեանը, Պ. Խաչատրեանը, Հ. Թամրազեանը, Հ. Միրզոյեանը եւ այլք: Տաղերը գրաբար բնագրերով եւ աշխարհաբար թարգմանութեամբ, ներածականով եւ ծանօթագրութիւններով լոյս է ընծայել Արշաւիր Մխիթարեանը³: Աւելի ուշ Նարեկացու տաղերի եւ գանձերի ծագումնաբանական, ժամանակագրական եւ տեքստաբանական քննութիւն է կատարել Արմինէ Քեօշկերեանը⁴: Նրա աշխատութեան մէջ ներկայացուած են 10 գանձերի եւ 21 տաղերի քննական բնագրերը, որոնք կազմուած են ե՛ւ ձեռագիր, ե՛ւ տպագիր աղբիւրների հիման վրայ: Զեռագիր աղբիւրներում ընդգրկուած են 44 ընտիր ընդօրինակութիւններ, ինչպէս նաեւ օգտագործուած են ԺԳ.-ԺԴ. դարերի Գանձարան ժողովածոները, որոնք չուրջ մէկ տասնեակ են: Տպագիր ժողովածոներից նախընտրութիւնը տրուած է 1840 թ. Վենետիկում հրատարակուած հատորին, որում ընդգրկուած են հեղինակի 3 գանձեր ու 17 տաղեր:

Նորաբանութիւններն ուսումնասիրելու համար առաջին հերթին պէտք է հասկանալ, թէ որ բառերը կարելի է նորաբանութիւն համարել: Ընդհանրացնելով լեզուաբանութեան մէջ եղած սահմանումները, ինչպէս նաեւ օգտուելով Արտաշէս Մարտիրոսեանի⁵ ժամանակակից հայերէնի համար ընդունած սկզբունքից՝ մենք

նորաբանութիւն ենք համարում լեզուի պատմութեան իւրաքանչիւր փուլում գործածուող զանազան նոր երեւոյթները, ինչպէս՝

Բառապաշարում եղած բառերի մտորակներ հաղորդելը.

- ա. բառերի ոճական մի շերտից անցումը մէկ այլ շերտ, օրինակ՝ ժողովրդախօսակցական կամ բարբառային բառերի գրականացումը,
- բ. բառապաշարում եւ բառարաններում հնացած կամ մասնագիտական յղումով բառերի թարմացումը կամ անցումը մէկ այլ տեղմինահամակարգ,

Բառակերտման միջոցները.

- ա. բառակազմական նոր կաղապարների ստեղծումը, օրինակ՝ Նարեկացին դուռերանուան սեռական հոլովով, ին վերջածանցով եւ գոյականով ստեղծել է հետեւեալ բառերը՝ քոյիմագէմ, քոյիմակրում եւ այլն,
- բ. երկանդամ կամ բազմանդամ բառակազմութիւնները մէկ բառով ներկայացնելը՝ բնական պաշար - բնապաշար,
- գ. բառակազմութեան կրճատումը՝ երթուղային տաքսի - երթուղային,
- դ. բառահատումը՝ մաթեմատիկա - մաթեմ,
- ե. անցումը բայական բառոյթի վերլուծական կազմութիւններից համադրականի՝ իրագեկ դարձեալ - իրագեկել,

Բառակազմական առկայ կաղապարներով մոր բառերի ստեղծումը.

- ա. ածանցմամբ՝ դիմակերպութիւն
- բ. բառաբարդմամբ՝ գաղտնածածուկ

Արմատական բառերի ստեղծումը.

ստղի-հտղի, սուրճ

Փոխառութիւնը եւ պատճէտումը. մարտավարութիւն

³ Արշաւիր Մխիթարեան, Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Հայպետհրատ, Երեւան, 1957:
⁴ Գրիգոր Նարեկացի, Տաղեր եւ գանձեր, աշխատասիրութեամբ Արմինէ Քեօշկերեանի, Երեւան, 1981:
⁵ Ա. Մարտիրոսեան, Արդի հայերէնի մորաբանութիւնների բառակազմական կաղապարները, Երեւան, 2007, էջ 38:

Աւելորդ չենք համարում մէջբերել Գ. Մանուկեանի մի դիտարկում, որտեղ ասուում է, որ բառերի բառաքերականական, բառաիմաստային եւ հնչիւնական փոփոխութիւնները չեն կարող հիմք լինել բառային նորակազմութիւն ընդունելու համար⁶: Անշուշտ, բառաքերականական ձեւերը եւ հնչիւնափոխութիւնները չեն կարող նորակազմութիւն համարուել, սակայն բառիմաստային փոփոխութիւնները, մեր կարծիքով, պէտք է համարել նորաբանութիւն՝ հաշուի առնելով, որ բառն իմաստի եւ ձեւի միասնութիւնն է:

Գրիգոր Նարեկացին իսկական լեզուաշինարար է: Նրա նորակազմութիւններին անդրադարձել են նարեկացիագիտութեան բազմաթիւ երախտաւորներ:

Վ. Առաքելեանը «Մատեան ողբերգութեան» պոեմը քննելիս գրում է, որ Նարեկացու համար դժուար էր մասամբ արդէն արհեստականացած գրական լեզուի միակողմանի բառապաշարով դրսեւորել իր հոգեկան բարդ ողբերգութիւնը հազարերանգ գունազեղ ձեւերով. նա դիմում է մի երկրորդ միջոցի՝ նորակազմ բառերի օգնութեանը⁷: Սակայն փաստերը ցոյց են տալիս, որ միայն «Մատեան ողբերգութեան»-ի մէջ չէ, որ հեղինակը ստեղծել է նորակազմութիւններ: Նորակազմութիւնները պարզապէս ողողում են Նարեկացու ողջ ստեղծագործութիւնը⁸: Չհամաձայնելով Վ. Առաքելեանի այն կարծիքին, որ Նարեկացու տաղերը «Մատեան ողբերգութեան»-ի համեմատ մեծ մասամբ թոյլ են, եւ այնտեղ չկան այն բանաստեղծական շունչը, ներ-

քին ալեկոծումներն ու փոթորիկները՝ ձեւական բազմաթիւ նրբութիւններով դրսեւորուած⁹, պէտք է նշենք, որ Նարեկացին այստեղ եւս հանճարեղ բառաստեղծ է:

Նշենք, որ տաղերի ու գանձերի բառապաշարի վերաբերեալ ընդգրկուած եւ բազմակողմանի ուսումնասիրութիւն չկայ: Հ. Միրզոյեանը նորաբանութիւնների ցանկը դուրս է գրել ՆՀԲ-ից, սակայն ՆՀԲ-ում ամբողջապէս ներկայացուած չեն Նարեկացու նորաբանութիւնները: Ծնորհակալ ենք Հ. Միրզոյեանի կատարած հսկայական աշխատանքի համար, որը նարեկացիագիտութեան ասպարէզում լուրջ ներդրում է, սակայն պէտք է ընդունել նաեւ Գ. Մանուկեանի այն դիտարկումը, որ ՆՀԲ-ում կան բազմաթիւ բառեր՝ վկայուած միայն մէկ բնագրով, բայց դա չի նշանակում, որ տուեալ բառն ստեղծել է այդ բնագրի հեղինակը¹⁰: Բացի այդ, ՆՀԲ-ի հեղինակները ամբողջապէս չեն ուսումնասիրել Նարեկացու բառապաշարը:

Տաղերի եւ գանձերի բառապաշարի գիտական աւելի հանգամանալից վերլուծութիւն առաջին անգամ կատարել են Լ. Յովսէփեանը եւ Օ. Խաչատրեանը: Ուսումնասիրութիւնն ամփոփուած է երկու յօդուածում¹¹, որտեղ քիչ թէ շատ քննուած են նաեւ նորաստեղծ բառերը:

Գրաբարի բառակազմութեան հիմնական եղանակները բառաբարդումն ու ածանցումն են, որոնք յատուկ են եղել Հայերէնին նրա զարգացման բոլոր փուլերում: Պարզ եւ բազադրեալ կազմութիւն-

⁹ Վ. Առաքելեան, Աշ. աշխ., էջ 252:
¹⁰ Գ. Մանուկեան, Աշ. աշխ., էջ 87:
¹¹ Լ. Յովսէփեան, Օ. Խաչատրեան, Գրիգոր Նարեկացու տաղերի եւ գանձերի բառապաշարի փոխակազմական բնութիւնը, Ջափուկեանական ընթերցումներ, Երեւան, 2009, Լ. Յովսէփեան, Օ. Խաչատրեան, Գրիգոր Նարեկացու տաղերի եւ գանձերի բառապաշարի բառակազմական վերլուծութիւնը, Ջափուկեանական ընթերցումներ, Երեւան, 2010:

ների տարբերակումը լեզուի անցած փուլերի դեպքում բառական բարդ է, քանի որ, ինչպես նշում է Լ. Յովսէփեանը, չկայ լեզուի կենդանի զգացողությունը, եւ բաղադրեալ կազմութիւն կարող է համարուել այն, ինչը տրոհելի էր լեզուի աւելի վաղ շրջանում¹²: Սա վերաբերում է բառի ձեւաբանական, այսինքն՝ ձեւութալին-բառակազմական կառուցուածքին: Ինչպէս այլ լեզուներում, այնպէս էլ գրաբարում, բացի յստակօրէն որոշուող պարզ բառերից եւ որոշ բաղադրեալ կազմութիւններից, կան նաեւ անցումային շատ դեպքեր, որոնց մէջ այս կամ այն բառակազմական միաւորի առանձնացումը կապուած է որոշակի պայմանականութեան հետ: Ըստ այդմ՝ բառերն ունեն տրոհելիութեան տարբեր աստիճաններ: Այսպիսով՝ Լ. Յովսէփեանն առանձնացրել է բառի տրոհելիութեան հետեւեալ սկզբունքը. «Տրոհելի (հետեւաբար բաղադրեալ) են համարուում այն կազմութիւնները, որոնց բաղադրիչներից առնուազն մէկը տուեալ ժամանակագրական կտրուածքում պահպանել է իր իմաստային եւ գործառական որոշակիութիւնը եւ յարաբերակցում է նաեւ այլ բառերում հանդիպող նոյն կամ նոյնարժէք տարրերին»¹³:

Հայերէնի բառակազմութեանը վերաբերող բազմաթիւ արժէքաւոր ուսումնասիրութիւններ կան¹⁴, սակայն մենք նպատակայարմար ենք համարում առաջնորդուել Լ. Յովսէփեանի «Գրաբարի բառակազմութիւնը» գրքում առաջարկուած մեթոդներով, քանի որ դրանք հնարաւորութիւն են տալիս միաժամանակ յստակ կերպով ներ-

կայացնելու ինչպէս բառի ձեւութալին կազմութիւնը, այնպէս էլ բառակազմական եղանակներն ու բառի սերման պատմութիւնը՝ բառակազմական տարրերի կցման հերթականութիւնը: Այս ամէնը ներկայացնելու համար օգտուում ենք հետեւեալ պայմանական նշաններից. S - սկզբնահիմք, a - ածանց, f - քերականական մասնիկ կամ թեքոյթ, j - յօդակապ, c - շղկապ, p - նախդիր: Հիմքի հնչիւնափոխուած կամ ձեւաւոր տարբերակը նշուած է S նշանով՝ SjS-ազնուագութ, քերականական՝ ձեւաւորում ունեցող հիմքը՝ Sf նշանով՝ SfSf - օրէնստույց, Sjsf - անուանադիր, կրկնաւորներն ընդգծուած են՝ Sjs - չարաչար, բաղադրիչների անջատ կիրառութիւնը արտացոլուած է գծիկով՝ S-S - երփն երփն, միասնաբար հանդէս եկող բաղադրեալ ձեւոյթները կցուած են իրար + նշանով (SSf)(a+a) - երկբայանամ, իսկ փակագծերը ցոյց են տալիս կցման յաջորդականութիւնը՝ a[(SS)a] - անաստուածպաշտութիւն: Ամենանախնական բառակազմական քայլն առնուած է կլոր փակագծերի մէջ, յաջորդը՝ ուղիղ եւ վերջինը՝ ձեւաւոր: Փակագծերի բացակայութիւնը նշանակում է բաղադրիչների միաժամանակեայ կցում¹⁵:

Նորաբանութիւնների բառակազմական կաղապարները ներկայացնում ենք ըստ բառակազմութեան երկու գլխաւոր եղանակների՝ բառաբարդման եւ ածանցման: Իւրաքանչիւր խմբում ներկայացնում են հիմնականապարները եւ ենթակաղապարները՝ ըստ խօսքիմասային պատկանելիութեան:

Ա. Բառաբարդման կաղապարները Նարեկացու Նորակազմութիւններում

Բառաբարդման կաղապարները ներկայացրել ենք երկու հիմնական խմբով՝ յօդակապաւոր եւ առանց յօդակապի: Իւ-

¹² Լ. Յովսէփեան, Գրաբարի բառակազմութիւնը, Երեւան, 1987, էջ 42:
¹³ Նոյն տեղում, էջ 49:
¹⁴ Մ. Արեղեան, Հայոց լեզուի տեսութիւն, Երեւան, 1965. Է. Աղայեան, Ընդհանուր եւ հայկական բառագիտութիւն, Երեւան, 1984. Փ. Զահուկեան, Հայոց լեզուի զարգացումը եւ կառուցումը, Երեւան, 2006 եւ այլն:

¹⁵ Լ. Յովսէփեան, Գ. աշխ., էջ 56:

րաքանչիւր խմբում առանձնացնում են կաղապարներն ըստ բաղադրիչների կազմի եւ դիրքի, իսկ իւրաքանչիւր կաղապարի մէջ՝ ենթակաղապարները կամ տարբերակներն ըստ բաղադրիչների ձեւաւորման առանձնայատկութիւնների (հնչիւնափոխութիւն, թեքոյթաւորում, խօսքիմասային պատկանելիութիւն):

Տաղերի եւ գանձերի նորաբանութիւններն ուսումնասիրուած են զուգահեռաբար:

Յօդակապաւոր իսկական բարդութիւնները գերակշռող դիրք են գրաւում Նարեկացու ստեղծած նորաբանութիւնների մէջ: Դրանց քանակութիւնը մեծ է ե՛ւ տաղերում, ե՛ւ գանձերում:

Տաղերում հետեւեալ պատկերն է.

- աղերսագոչ - S j S
- բոցատիպ - S j S
- բոցաշաւիղ - S j S
- արքայաճեմ - S j S
- գարունահրաշ - S j S
- գեղաշիտակ - S j S:
- Գանձերում եղած նմանատիպ կառույցները տարբերուած են միայն իմաստային որոշ նրբերանգներով.
- արփիանկար - S j S
- եղեմատունկ - S j S
- եւթնաճրագ - S j S
- դառնաճաշակ - S j S
- օճաբորբ - S j S
- լուսածին - S j S:
- Ենաբաղադրիչ կաղապարներում զգալի թիւ են կազմում հնչիւնափոխուած հիմքով բառերը: Ներկայացնենք օրինակներ տաղերում առկայ նորաբանութիւններից.
- արքունաճեմ - S j S
- կարմրածորձ - S j S
- հրակոծ - S j S
- մանուշկաբեր - S j S

մարգարտափայլ - S j S:

Գանձերում նմանատիպ կառույցներն առաւել քիչ են հանդիպում.

- վալելչապանձ - S j S
- տիրատուր - S j S
- արարչատես - S j S

Նարեկացու ստեղծած նորաբանութիւններում դիտարկուած է մի հետաքրքիր երեւոյթ. սերող հիմքը հնչիւնափոխութեան չի ենթարկուած. մնում է անփոփոխ: «Նարեկացին չի խուսափում ձայնաւորների հանդիպումից առաջացող յօրանջից (ի-ա), որը յատուկ է հայերէնի հնչաշղթային»¹⁶:

- խիտասաղարթ - S j S
- խունճերամ - S S
- տեղիարան - Sⁱ a
- տափղապարճիո - S j S

Հնչիւնափոխութեան բացակայութիւնը կարելի է բացատրել սերող հիմքն անփոփոխ պահելու միտումով, որը կարող է ունենալ ոճական նշանակութիւն. այդ դեպքում շեշտուած է բառային հիմքի իմաստը: Հաշուի առնենք, որ Նարեկացին գանձերը գրելիս չունէր յանգաւորման յատուկ խնդիր եւ աւելի ազատ կարող էր լինել ոճական առումով, սակայն գանձերում եւս դիտարկուած են անհնչիւնափոխ ձեւեր, որը թոյլ է տալիս ենթադրել, որ սա Նարեկացու իւրայատուկ մտածողութեան արդիւնքն է.

- հոգիաճիր - S j S
- շուրջանափայլ - (S a) j S
- արփիանկար - S j S:

Նարեկացու նորաբանութիւններում քիչ չեն ձեւաբանական ձեւաւորում ունեցող հիմքերից կազմուած բառերը.

¹⁶ Լ. Յովսէփեան, Օ. Խաչատրեան, Գրիգոր Նարեկացու տաղերի եւ գանձերի բառապաշարի բառակազմական վերլուծութիւն. Զահուկեանական ընթերցումներ, Երեւան, 2010, էջ 178:

- հիրապալաց - S j S^f
- պերճաբարոյ - S j S^f
- սարդիատունկ - S^f j S
- վերնակատոյց - S j S^f
- ցոփիւնընթաց - S a S^f:

Այստեղ պէտք է խօսել եւս մէկ հետաքրքիր երեւոյթի մասին. տաղերում եւ գանձերում ստեղծուած նորաբանութիւններում շատ կան այնպիսի յաւելուրդային ածանցներ, որոնք իմաստային փոփոխութիւն չեն առաջացնում, սակայն սաստկացնում են սերող հիմքի իմաստը: Քանի որ այս պահին ուսումնասիրութեան նիւթը իսկական բարդութիւններն են, ներկայացնենք միայն հիմքին կցուող -ին վերջածանցը, որն ունի ոճական արժէք: Այս երեւոյթը դրսեւորում է միայն տաղերում, ինչը, կարծում ենք, պայմանաւորուած է տաղերի ժանրային առանձնատկութեամբ.

- աճեղիմանում - S a j S
- կուսիմածոց - (S a) j S
- մաքրիմանում - (S a) j S:

Սա չի նշանակում, թէ գանձերի նորակազմութիւններում չկան ածանցաւոր հիմքի օրինակներ, սակայն այս դէպքում ածանցների իմաստները պահպանուած են.

- գնդակահրաշ - (S a) j S
- սնտիաժողով - (S a) j S
- սքանչելապայծառ - (S a) j S
- գեղատխտութիւն - S j (a S):

Ի տարբերութիւն գանձերի՝ տաղերում կան եռահիմք իսկական բարդութիւններ, որը կարելի է համարել Նարեկացու բազմաբովանդակ մտածողութեան արդիւնք.

- աճազնակոշկոճ - (S a) j (SS)
- հրահոսավտակ - (S j S) j (S a)
- թեւատրոհաթեւ - (S j S) j S
- փողփողեմէջ - (S S a) S:

կցական բարդութիւնները նորաբանութիւններում մեծ թիւ չեն կազմում: Այս տեսակի բարդութիւնների ստեղծման յաճախականութիւնը տաղերում աւելի բարձր է, քան գանձերում.

- բամբերգ - S S
- եզնամոլ - S S
- եղնորթի - S S
- եւթնաղի - S S
- խոռոնքամ - S S
- համարձայն - S S:

Տաղերում հանդիպում են նաեւ հնչիւնափոխուած, ինչպէս նաեւ՝ ձեւաբանական ձեւաւորում ունեցող հիմքով կցական բարդութիւններ: Երբեմն այս տարատեսակները կիրառուած են մէկ բառում.

- դիմառ - S S^f
- հրարփի - S S:

Գանձերում նմանատիպ կառոյցներ գրեթէ չեն հանդիպում:

Նարեկացու ստեղծած նորաբանութիւնների սկզբնահիմքերի խօսքիմասային պատկանելիութեան որոշումը դժուարութիւններ չի առաջացնում միայն այն դէպքերում, երբ բաղադրիչները վկայուած են նաեւ անկախ արմատների տեսքով, յատկապէս՝ անուանական խօսքի մասերի դէպքում, երբ չկան փոխանցումներ խօսքի մասերի միջեւ եւ անուանաբայական արմատական համանունութիւն, օրինակ՝

- աղէտակոծ - S j S - գոյական-բայ
- բողբոջախիտ - S j S - գոյական-ածական
- գարնանաբոյս - S^f j S - գոյական-գոյական եւ այլն:

Սակայն շատ դէպքերում բարդութիւնների բաղադրիչների խօսքիմասային պատկանելիութեան որոշումը կապուած է որոշակի դժուարութիւնների հետ, ինչպէս օրինակ, երբ արմատներն առանձին վկայուած չեն, կամ երբ առանձին արմատը վկայուած է, սակայն կաղապարում ձեռք

է բերել խօսքիմասային այլ արժէք, օրինակ՝ հրարփի - SS. այս բառի դէպքում պարզ չէ՝ առաջին արմատը գոյական է, թէ ածական, այսինքն՝ հուր - արփի, թէ հրէ - արփի:

Տարբերական խնդիր է առաջանում նաեւ այն դէպքում, երբ ձեռով համընկնում են բայական մաքուր արմատը եւ գոյականը¹⁷: Այս դէպքում գոյականը եւ բայարմատը հնչիւնական առումով կարող են նոյնը լինել, օրինակ՝ Արարիւնդի - S j S. այս բառի խնդիր արմատը կարող է լինել ե՛ւ խնդիր գոյականը, ե՛ւ խնդրել բայը: Բացի այս ամէնից, առկայ են նաեւ բառերի խօսքիմասային պատկանելիութեան որոշման ընդհանուր կարգի դժուարութիւններ:

Լ. Յովսէփեանը նշում է, որ այդ խնդիրները կապուած են հայերէնում գոյականի-ածականի, ածականի-մակբայի ձեւաբանական չտարբերակուածութեան, խօսքի մասերի միջեւ փոխանցումների, ածականների եւ այլ խօսքի մասերի գոյականացման եւ այլ երեւոյթների հետ¹⁸:

Նորակազմութիւնների դէպքում յաճախ են հանդիպում բառեր, որոնց հիմքի իմաստը չի հասկացուած: Խօսքը հիմնականում այն բառերի մասին է, որոնց հիմքը եւս Նարեկացու ստեղծածն է եւ կրում է ստեղծագործական պահի անմիջական ազդեցութիւնը, ինչպէս օրինակ՝ ստղի-հողի:

Փորձենք հնարաւորինս ներկայացնել սկզբնահիմքերի խօսքիմասային պատկանելիութիւնը.

- Գոյական + գոյական
- բոցաշաւիղ - S j S
- գարնանաբոյս - S^f j S

¹⁷ Գ. Զահուկեան, Ժամանակակից հայերէնի տեսութեան հիմունքները, Երևան, 1974, էջ 507:
¹⁸ Լ. Յովսէփեան, ԱԶ. աշխ., էջ 140:

- հրէակոյտ - S j S
- կուսիմածոց - S a j S:
- Գանձերում օրինակներն ալելի քիչ են.

- սկզբնաձեռն - S j S
- հրաբուն - S j S:
- Օրինակների սակաւութիւնը վկայում է, որ այս կաղապարը լայն ընդգրկում չունի Նարեկացու նորաբանութիւնների սուպրէֆիքում:

Գոյական + ածական
 Տաղերում կար ընդամենը մէկ օրինակ՝ ձայնաղի - S S, իսկ գանձերում հանդիպեցինք սրովբէաճոյս - S j S, հոգեպայծառ - S j S նորաստեղծ բառերին: Փաստորէն, այս կաղապարը եւս գործուն է Նարեկացու երկերում:

Գոյական + բայ
 Ե՛ւ տաղերում, ե՛ւ գանձերում այս կաղապարը բաւական գործուն է.

- արքայաճեմ - S j S
- արքունաճեմ - S a j S
- երգաբան - S j S
- լերիմաթինդ - S^f j S
- հիրապալաց - S j S^f
- հրակոծ - S j S
- մանուշկաբեր - S j S:

Այս բառերի թիւը, գանձերում աւելի փոքր է, քան տաղերում, սակայն նախորդ կաղապարների համեմատութեամբ աւելի յաճախ է հանդիպում.

- աւետատու - S j S
- մահակործան - S j S
- մանկակոտոր - S j S
- տիրատուր - S j S
- օրէնուրաց - S S^f
- երկնակատոյց - S j S^f:

Ածական + գոյական

Այս կաղապարը եւս բավական գործուն է.

խիտասաղարթ - S j S

խոտնէրամ - S S

կարմրաձորձ - S j S

անրաբեհեզ - S j S

անրախընդիր - S j S

անրատրդի - S j S:

Գանձերում նույնպէս կան օրինակներ.

բարձրագումբէթ - S j S

առաջակատոյց - S j S

յոզնաձայն - S j S

յոզնանկար - S j S

զուարճարոյս - S j S:

Թուական + գոյական

Այս կաղապարը եւս մեծ գործածութիւն չունի.

երկթերթ - S S

երթնաղի - S S

եռահրաշ - S j S

քառավտակ - S^f j S:

Նարեկացին երկու բարդ բառ է կազմել նաեւ դերանունով, ինչը շատ հետաքրքիր երեւոյթ է՝ քոյիմակրօն - S^f j S, քոյիմազէն - S^f j S:

Հնարաւորինս ներկայացնելով բարդ բառերի հիմքերի խօսքիմասային պատկանելիութիւնը՝ կարող ենք ասել, որ Նարեկացին աւելի շատ է կիրառել գոյական+բայ, գոյական+գոյական, ածական+գոյական մասնակազմապարները, ինչից կարող ենք եզրակացնել, որ Նարեկացին հետեւել է գրաբարում առաւել յաճախակի կիրառուած կաղապարների խօսքիմասային զուգորդելիութեանը¹⁹:

¹⁹ Նոյն տեղում, էջ 148:

Բ. Ածանցումը Նարեկացու նորակազմութիւններում

Նարեկացու բառաստեղծման միւս միջոցն ածանցումն է, որով կազմուած բառերը զգալիօրէն զիջում են բարդացմամբ կազմուած բառերին: Խօսքն, անշուշտ, նախածանցման եւ վերջածանցման մասին է, բարդ ածանցաւոր բառերի թիւն այդքան էլ փոքր չէ: Այս առումով Նարեկացին Հայերէնի բառակազմական հնարաւորութիւնների ասպարէզում մի նոր էջ է բացել. Լ. Յովսէփեանը գրաբարի բառակազմական կաղապարներն ուսումնասիրելիս գրում է, որ բաղադրեալ բառերի ընդհանուր քանակով ածանցաւոր կազմութիւնները գրեթէ մէկուկէս անգամ գերակշռում են բարդութիւններին²⁰, ինչը չի կարելի ասել Նարեկացու նորաբանութիւնների մասին, քանի որ այստեղ գերակշռողը բարդ բառերն են: Կարելի է կարծել, որ դրա հիմնական պատճառը Նարեկացու կողմից բառիմաստի անչափ կարեւորումն է, քանզի ածանցաւոր բառերի մէջ եւս զգալիօրէն մեծ թիւ են կազմում բարդ ածանցաւոր բառերը:

Նորաբանութիւններում նախածանցաւոր բառերն ակնյայտօրէն զիջում են վերջածանցաւոր բառերին, ինչը նկատուում էր նաեւ գրաբարում: Այս մասին խօսելիս լեզուաբանները նշում են, որ գրաբարում պահպանուել են բազմաթիւ բառեր, որոնց կազմում կարելի է անջատել զգալի թուով նախածանցներ, որոնք ժամանակին ակտիւ բառակազմական դեր են կատարել²¹: Սակայն Հին դրական Հայերէնի սկզբնաւորման շրջանում ստեղծուել էր մի այնպիսի վիճակ, երբ Հնդեւրոպական նախածանցների մեծ մասը մթազնել էր եւ, կորցնելով բառակազմական գործառնոյթը,

²⁰ Նոյն տեղում, էջ 158:
²¹ Տե՛ս Վ. Առաքելեան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականութեան լեզուն եւ ոճը, Երեւան, 1984, էջ 76-79. Գ. Ջահուկեան, Հայոց լեզուի պատմութիւն, Ամսագրային ժամանակաշրջան, Երեւան, 1987, էջ 242:

ձուլուել արմատին: Ըստ այդմ՝ առաջ էր եկել նախածանցման որոշ սահմանափակութիւն: Գրաւոր լեզուի հիմնադրումից եւ նրա գիտակցուած մշակման սկզբնաւորումից յետոյ յունաբան դպրոցի ջանքերով ստեղծուեցին կամ գործառական ակտիւութիւն ձեռք բերեցին բազմաթիւ նախածանցներ, որոնք շատ կարճ ժամանակահատուածում ներմուծուեցին գրաբարի բառակազմական համակարգ: Սակայն զարմանալի է, որ Նարեկացին նախածանցաւոր բառեր շատ քիչ է կերտել. նոյնիսկ տաղերում եւ գանձերում դրանց թիւը մէկ տասնեակից չի անցնում.

- ամենալստահ - a S
- անհարսնացեալ - a (S^f a)
- անպատրաստութիւն - (a S) a
- ապաձեռնօք - a (S a)
- համագոյակից - a (S j S)
- աննուաղելի - a (S a)
- գերունակութիւն - a (S a)
- անբանողիմ - (a S a) a:

Վերջածանցման կաղապարներն աչքի չեն ընկնում մեծ բազմազանութեամբ: Ինչպէս գրաբարում, այնպէս էլ այստեղ ամենատարածուածը միարմատ մէկ վերջածանցով կազմութիւններն են.

- աթոռակ - Sa
- աղերսաւոր - Sa
- անձկիմ - S a
- դիտարան - S a
- երթերական - S a
- երթերեան - S a
- երրակ - S a
- իմնաբար - S a
- կանչիմ - S a
- կորովաբար - S a
- հարսնութի - S a
- նոյսարան - S a:

Վերջածանցաւոր երկբաղադրիչ կառոյցները համեմատաբար քիչ են.

- գետօրէն - S a
- գոյացող - S a
- հանդերձիչ - S a
- ցամաքիչ - S a
- էացեալ - S^f a
- մաքրագոյն - S a:
- Որոշ դէպքերում հանդիպում են նաեւ երկու վերջածանցով կազմուած բառեր.
- երանաւետեալ - (S a) a
- գօրեղիմ - (S a) a
- լրումօրէն - (S a) a
- հեղիմաւորեալ - (S a) a
- հրաւիրողակ - S a a

Նշենք, որ -եալ վերջածանցով բաղադրութիւնները բաց խումբ են ներկայացնում եւ կարող են կազմուել իւրաքանչիւր բայից՝ հիմնականում անցեալ դերբայի իմաստ, սակայն բազմաթիւ են նաեւ արդէն ածականի եւ գոյականի արժէք ստացած բառերը.

Երանաւետեալք անդ ի վերիմն Երուսաղէմ, տեալեամբ զուարճանալք արարողիմ տիեզերաց...

Կամ՝
Գալուստ անհեղիմ ատուր, ատուրք հեղիմաւորեալ, Գայ ի Բեթանիա՝ չարչարանացն տուն...

Կան նաեւ այլ ածանցների կիրառութիւններ՝ իրենց իմաստային առանձնաշատկութիւններով.

- լրումօրէն - (S a) a
- կանչիմ - S a
- կորովաբար - S a
- հարսնութի - S a
- նոյսարան - S a
- նէճել - S a
- նուաղեմալ - S a
- նուխայօրէն - S a

շարժեցնել - S a
 շնորհալուծ - S a
 պտղիմալուծ - S^f a
 սաքայլեան - S a:
 Ե՛լ տաղերում, ե՛լ գանձերում, ի տարբերութիւն անանցաւորների, համեմատաբար մեծ գործածութիւն ունեն բարդ անանցաւոր բառերը, որոնք ներկայանում են բազմաբաղադրիչ կաղապարներով.

արթնաչեայ - S S a
 արիազարդեայ - (S j S) a
 արիիատեսիլ - (S j S) a
 բամբերգայիմ - S S a
 բոսորատրիմազարդեայ - [S a (S a S)] a
 բոսորեքանգեան - (S S) a
 գերափառեայ - (S j S) a
 գծագրեանի - (S j S) a
 եռաստուիչ - S^f j S a
 երեքսրբեան - (S S) a
 երիմազարդեայ - (S a S) a
 երիմունակ - S (S a)
 խոունամանուած - S j S a:
 Այս դէպքում արդէն գանձերում եղած բարդ անանցաւոր նորաբանութիւնները քանակապէս չեն զիջում տաղերում եղածին.

աղերսարկութիւն - S S a
 անուամագրութիւն - S^f S a
 անսխալաստեղծ - a (S j S)
 բազկատարածութիւն - (S a S) a
 բազմաստեղում - S S^f a
 բարեքանական - (S j S) a
 եզիպտակործան - S j S a
 երգաբանեայ - (S j S) a
 երթնաստեղեան - S S^f a:
 Առաւել շատ են -եմի, -իմ, -ակ անանցներով օրինակները: Սրանցից -եմի անանցը միայն մասամբ է յաւելուրդային՝ անծայրեմի, նրբեմի. այլ դէպքերում ունի

անանցանակերտ եւ մակբայակերտ արժէք: Նարեկացին բաւականին ընդլայնել է այս անանցի գործածութիւնը զանազան հիմքերի հետ, որոնց հետ դասական շրջանում այն չէր բաղադրուում²²: Միւս անանցներով վկայութիւնները սահմանափակ են, սակայն դրանք եւս վկայում են սաստկականութեան արտայայտման հեղինակային հնարանքը, որը յստակ երեւում է նրանից, որ այդ բառերից մի քանիսի անանց տարբերակներն աւելի ընդունուած են եղել հայ հին մատենագրութեան մէջ եւ արձանագրուած են բառարաններում.

արեւմտեմի - (S S) a - արեւմուտ
 գծագրեմի - (S j S) a - գծագիր
 ծոցածագեմի - S j S a - ծոցածագ
 շողշողեմի - S S a - շողշող:
 Այս անանցներով կերտուել են նաեւ այնպիսի բառեր, որոնք առանց անանցի վկայուած չեն եղել.

թէկմիթեկիմ - S j S a
 ոլոամիջակ - (S j S) a
 քաղցրունակ - S S a:
 Նարեկացին տաղերում ստեղծել է նաեւ յարադրաւոր կազմութիւններ, որոնք ունեն իւրայատուկ ոճական երանգաւորում.

Թիւ միշտ եռակի եզեռակի փա՛ռք.
 Փա՛ռք իմ դիմառից էից գոյէից գունդ:
 Նոճ ի նոճ յետ ի սաւիոր եղեգնատնկոյն,
 մատնօրիճօրէն, նշարեմի ուսի:
 Յարադրաւոր ձևեր չեն հանդիպում գանձերում:
 Ուսումնասիրելով Նարեկացու նորաբանութիւնների բառակազմական համակարգը՝ կարող ենք ասել, որ Նարեկացին

²² Լ. Յովսէփեան, Օ. Խաչատրեան, Գրիգոր Նարեկացու տաղերի եւ գանձերի բառապաշարի բառակազմական վերլուծութիւն, Ջափուկեանական ընթերցումներ, Երևան, 2010, էջ 179:

ոչ միայն ամբողջապէս չի հետեւել գրաբանն բառակազմական կաղապարներին, այլեւ դրանք զարգացրել եւ կատարելագործել է:

Այսպիսով, եթէ գրաբարում բառակազմական կաղապարների մէջ գերակշռում է վերջածանցման կաղապարը, ապա Նարեկացու նորաբանութիւնների մէջ գերակշռում է բարդացման կաղապարը, որը ենթադրում է իմաստային առումով աւելի հարուստ եւ հետաքրքիր բառային միաւորների ստեղծում:

Եթէ գրաբարում կաղապարի եւ նրա իրացման յարաբերութեան քննութիւնից պարզուում է, որ որքան բարդ է կաղապարն իր կառուցուածքով, այնքան նուազում է նրա կոնկրետ իրացումների հնարաւորութիւնը, ապա Նարեկացու նորաբանութիւններում հակառակ երեւոյթն է՝ պարզից գնում է դէպի բարդացում: Եթէ հաշուի առնենք, որ երկբաղադրիչ կաղապարները քիչ են, իսկ բազմաբաղադրիչ կառուցներում ամենից շատ հանդիպում են բարդ՝ եռաբաղադրիչ եւ բարդ անանցաւոր՝ բազմաբաղադրիչ ձևերը, կարող ենք ասել, որ Նարեկացին հայերէնի բառակազմական համակարգը հարստացրել է բազմաբաղադրիչ կաղապարներով:

Նարեկացու նորաբանութիւնները լուրջ ներդրում են ունեցել ե՛լ հայերէնի բառապաշարի զարգացման գործում, ե՛լ առանձին հեղինակների բառապաշարի հարստացման գործում: Ներսէս Ծնորհալին, Մխիթար Գօշը, յետագայում արդէն՝ Միսաք Մեծարենցը եւ այլ հեղինակներ լայնօրէն կիրառել են այդ բառերը, ինչի շնորհիւ Նարեկացու ստեղծած բառերի մի մասը անցել է դարերի բովով եւ հասել մեզ:

Անշուշտ, եղել են նորաբանութիւններ, որոնք դիպուածային բնոյթ են կրել, բառերի մի հատուածն էլ գործածուել է միջնադարում միայն, սակայն կան բազմաթիւ բառեր, որոնք այժմ կիրառում ենք,

ինչպէս օրինակ՝ սրտածմլիկ, ահեղագոչ եւ այլն:

Գրիգոր Նարեկացին այն բացառիկ հեղինակներից է, որոնք նորաբանութիւններ են կերտել ոչ միայն բառակազմական տարբեր միջոցներով, այլեւ հէնց իրենք են ստեղծել նոր արմատներ, օրինակ՝ ատիճաղ-պատիճաղ, ստղի-հտղի. այս բառերը վկայուած չեն ոչ մի բառարանում եւ բաւական դժուար է որոշել դրանց իմաստը: Կարծում ենք՝ դրա պատճառն այն է, որ Նարեկացին այդ բառերը ստեղծել է այնպիսի պահի, երբ ստեղծագործական ներշնչանքը հասնում է գագաթնակէտին, եւ ողջ զգացողութիւնները հաւաքուած են մէկ բառում: Սա երեւում է օրինակներում.

Ձեռացն եղիշոյ կամարակապ կապէր.
 ատիճա՛ղ-պատիճա՛ղ, ստղի-հտղի
 հոռն:

Հոսէր զելեւելսն ընդ միմեանս...
 Գիտենք, որ ՆՀԲ-ի հեղինակներն ուսումնասիրել են մօտաւորապէս մինչեւ ԺԲ. դարը եղած հեղինակների բառապաշարը, սակայն պէտք է նշել, որ Նարեկացու բառապաշարի շատ քիչ մասն է ամփոփուած բառարանում:

Բառերի մէկ այլ մաս կայ բառարանում, սակայն այլ գլխաբառի համար բերուած օրինակներում է, քանի որ էլեկտրոնային փնտրողական համակարգը մեզ հնարաւորութիւն է տալիս տեսնելու իւրաքանչիւր բառ ողջ բառարանում, մենք կարողացել ենք տեսնել բառի բոլոր օրինակները, եթէ բառը ներառուած է բառարանում:

Ուսումնասիրութեան արդիւնքում ստացուում է, որ ՆՀԲ-ում չկայ տաղերի նորաբանութիւններից 108-ը, իսկ գանձերից՝ 39-ը: Որպէս գլխաբառ տրուած չեն տաղերից 30 բառ, իսկ գանձերից՝ 25 բառ:

Անշուշտ, նորաբանութիւնների առանձնացման մէջ որոշակի պայմանականութիւն կայ, ինչը պայմանաւորուած է

ընդհանուր խնդիրներով: Այդքան հեշտ չէ որոշել այս կամ այն բառի նորաբանութիւն լինելը, քանզի, այդ բառերը կարող էին գործածուած լինել այն մատեաններում, որոնք մեզ չեն հասել, կամ չկան մեր ձեռքի տակ: Ըստ այդմ՝ պատրաստ ենք ընդունել իւրաքանչիւր դիտողութիւն:

Մեր ուսումնասիրութիւնը կատարել ենք՝ քննելով հնարաւոր գրեթէ բոլոր աղբիւրները, ինչպէս նաեւ հաշուի ենք առել հեղինակային, ոճաբանական եւ բառակազմական առանձնայատկութիւնները, որոնք բնորոշ են Նարեկացուն:

Քննութեան արդիւնքում տաղերում եղած նորաբանութիւնների թիւը 189-ն է, իսկ գանձերում եղածների թիւը՝ 103: Սակայն կայ մօտ 100 բառ, որ, կարելի է ենթադրել, Նարեկացու ստեղծածն է: Այդ բառերը հանդիպում են կրօնական նիւթերի տարբեր ժողովածոներում, որոնց թիւը եւ հեղինակները յայտնի չեն, ինչպէս՝ «Տօնակը»: Բառերը ճշգրտման կարիք ունեն:

Այսպիսով՝ տաղերի բառային միաւորների քանակը 1074 է, իսկ այնտեղ առկայ նորաբանութիւնների քանակը՝ 189, այսինքն՝ 17,6%: Գանձերի բառերի ընդհանուր քանակը 6800 է, այնտեղ առկայ նորաբանութիւնների քանակը՝ 103, այսինքն՝ 0,68%: Փաստօրէն, Նարեկացին տաղերում աւելի շատ նոր բառեր է ստեղծել, քան գանձերում, սակայն, հաշուի առնելով գանձերի ժանրային առանձնայատկութիւնները, կարող ենք ասել, որ այս արդիւնքը բաւական բարձր է:

Բառակազմական եւ իմաստաբանական քննութիւնը ներկայացնենք աղիւսակներով.

Տաղերում առկայ Աորակազմութիւնների բառակազմական քննութեան արդիւնքները

Պարզ	7
Բարդ	84
Նախածանցաւոր	3
Վերջածանցաւոր	40
Բարդ ածանցաւոր	46
Յարադիր	5
Ընդամէնը	189

Գանձերում առկայ Աորակազմութիւնների բառակազմական քննութեան արդիւնքները

Պարզ	49
Բարդ	9
Նախածանցաւոր	11
Վերջածանցաւոր	34
Բարդ ածանցաւոր	
Յարադիր	
Ընդամէնը	103

Տաղերում առկայ Աորակազմութիւնների բառակազմական քննութեան արդիւնքներն ըստ կաղապարների քանակի

Երկբաղադրիչ	52
Եռաբաղադրիչ	72
Քառաբաղադրիչ	58
Հնգաբաղադրիչ	7
Վեցաբաղադրիչ	-
Ընդամէնը	189

Գանձերում առկայ Աորակազմութիւնների բառակազմական քննութեան արդիւնքներն ըստ կաղապարների քանակի

Երկբաղադրիչ	15
Եռաբաղադրիչ	55
Քառաբաղադրիչ	33
Հնգաբաղադրիչ	-
Վեցաբաղադրիչ	-
Ընդամէնը	103

Տաղերում առկայ Աորաբանութիւնների ցանկը

1. աթոռակ
2. ահագնակոշկոճ
3. ահեղիմաճեմ
4. աղէքսագոչ
5. աղէտակոծ
6. ամբակ
7. անծայրեմի
8. անտխրական
9. ապրիշիմի
10. ասրասոյ
11. ատիճաղ-պատիճաղ
12. արդիւնալուր
13. արեւըտեմի
14. արթնաչեայ
15. արփագարդեայ
16. արփիատեսիլ
17. արքայաճեմ
18. արքունաճեմ
19. բամբերգային
20. բարեկերտիմ
21. բողբոջախիտ
22. բոսորաերփնագարդեայ
23. բոսորեքանգեան
24. բոցաշաւիղ
25. բոցատիպ
26. բուրագուարթ
27. գարնանարոյս
28. գարունահրաշ
29. գեղաշիտակ
30. գերափառեայ
31. գծագրեմի
32. դիմաոից
33. դիտարան
34. եռակի եզեռակի
35. եզնամոլիմ
36. եթերանըման
37. եթերեան
38. եղեգնաշէն
39. եղեգնատունկ
40. եռաստոիչ
41. երամաղիմ
42. երանաւետեայ
43. երեքսրբեանըդ

44. երիցօրեայ
45. երկթերթ
46. երրադրեայ
47. երրակիմ
48. երփնագարդեայ
49. երփնաթերթից
50. երփն-երփն առ երփն
51. երփնունակ
52. եւթնաղի
53. եւթնատես
54. եւթներգի
55. զանբանողիմ
56. զարմանաքանչ-
57. զերիգապարգեւ
58. զօրիմահաս
59. թեւատրոհաթեւ
60. թէկնիթեկիմ
61. իմնաբար
62. լեռնաթափեան
63. լերիմաթիմ
64. լրումնօրէն
65. խեղեփիմ
66. խիտասաղարթ
67. խոլըրձան
68. խոռնամանուած
69. խոռներամ
70. խրձաղիգեայ
71. ծաղկախալտուցք
72. ծայթիմասէր
73. ծաւալանայր
74. ծերածողով
75. ծիծաղախիտ
76. ծով ի ծով
77. ծոցածագեմի
78. կանչիմ
79. կառավարեան
80. կարմրածորձ
81. կողիմնապատիր
82. կորովաբար
83. կուսնածոց
84. հագրէվարդիմ
85. համարձայնոյ
86. համբերապատ
87. համբից
88. հարսնուհի-
89. հեղիմատրեայ-

- 90. հիւրաւագ-
- 91. հոգեզգեստեալ
- 92. հոգիազգեստեալ
- 93. հոգիապատում
- 94. հողմահնչեաց
- 95. հրակոծ
- 96. հրահոսավտակ
- 97. հրաշունակ
- 98. հրարփին
- 99. հրէակոյտ
- 100. ձայնադի
- 101. ձիթաստանեան
- 102. ձորձածածուկ
- 103. ճոխարան
- 104. ճորճչալով
- 105. մանուածաւալ
- 106. մանուշկաբեր
- 107. մանրահեղեղ
- 108. մանրամասին
- 109. մատնօրեայ
- 110. մատինայօրին
- 111. մատնօրինօրէն
- 112. մարգարտափայլ
- 113. մաքրիմանեմ
- 114. մեսիատես
- 115. յայտաթորելոյ
- 116. յանկարծահնչեաց
- 117. յիմաստնահօրէն
- 118. յորդահեղուս
- 119. յուսաբերին
- 120. նախընթացողին
- 121. նէճեմ
- 122. նըստտախումբ
- 123. նիւթէականին
- 124. նոճ ի նոճ
- 125. նորաբեհեզ
- 126. նորախընդիրք
- 127. նորախնդիր
- 128. նորաորդի
- 129. նորատունելում
- 130. նուաղեմար
- 131. նուաստատիպ
- 132. նուսխայօրէն
- 133. շարժեմայր
- 134. շարժվարժեմի
- 135. շմաթէն
- 136. շնորհաւէտ
- 137. շողշողեմի
- 138. շրջանապտոյտ
- 139. ոսկեշողէր
- 140. ոսկէճաճանչ
- 141. ոսկիանըման
- 142. ոստազուարճ
- 143. ոստինակոտոր
- 144. ուղխինահոս
- 145. ուռամիջակ
- 146. պերճաբարոյ
- 147. պտղինաւէտ
- 148. սաբայեան
- 149. սաթբերունի
- 150. սառնացեալ
- 151. սաստիկաշունչ
- 152. սաստկակսկիծ
- 153. սարդիատունկ
- 154. սափիրանափայլ
- 155. սրտանմլիկ
- 156. սիրաբողբոջ
- 157. սիրաշարժ
- 158. սկզբնազարդ
- 159. ստեղնաշիտակ
- 160. ստղի-հողի
- 161. սրովբէանման
- 162. վաղընթաց
- 163. վեհիմանեմ
- 164. վերատունելում
- 165. վերյարուցեալ
- 166. վերնակառոյց
- 167. վերնորոգեա
- 168. տաղերամին
- 169. տարրայնոյ
- 170. տարրաշշոյ
- 171. տաւիղապըճիո
- 172. տեառնագիր
- 173. տեղիարան
- 174. րախճանք
- 175. րոպ
- 176. ցոփիմանեմ
- 177. ցոփիմընթաց
- 178. փայլեմազարդ
- 179. փառատուողին
- 180. փթթինազարդ
- 181. փողփողեմէջ

- 182. փոյթ ի փոյթ
- 183. քաղցրերգանայր
- 184. քաղցրունակ
- 185. քառանիթեայ
- 186. քառասնապարծոյն
- 187. քրովբէաթոռ
- 188. քրտնակայլակն
- 189. օդիմատիպ

- 34. իսրայէլագումդ
- 35. լիսպարգել
- 36. կայլակահեղ
- 37. կանխաձայնութիւն
- 38. կանխառաք
- 39. հանդերձիչ
- 40. հաւասարափառ
- 41. հիանշմար
- 42. հոգետոհմութիւն
- 43. հոգիաձիր
- 44. հրամանատուր
- 45. մահակործան
- 46. մայրատախտակ
- 47. առաջակառոյց
- 48. յոգնաձայն
- 49. յոգնակար
- 50. յորդավտակ
- 51. սկզբնաձեռն
- 52. օտարասերմ
- 53. նախացուցակ
- 54. նւենապատ
- 55. շողաձիգ
- 56. շուրջանափայլ
- 57. ունարան
- 58. պատգամագրութիւն
- 59. պատշանակերտ
- 60. պարառմամբ
- 61. պարգեատրական
- 62. սահանահոս
- 63. սկզբնացուցիչ
- 64. սնտիածողով
- 65. սուկական
- 66. սրովբէանոխ
- 67. սքանչելապայծառ
- 68. վայելչապանծ
- 69. տիեզերահեղձոյց
- 70. տիրատուր
- 71. ցամաքիչ
- 72. քառաջահեան
- 73. օձաբորբ
- 74. օրէնուրաց
- 75. անուաղելի
- 76. աստուածագամ
- 77. աստուածախճամ
- 78. աստուածապարփակ
- 79. արուեստակցութիւն

Գանձերում առկայ նորաբանութիւնների
ցանկը

- 1. աղերարկութիւն
- 2. աղերարկու
- 3. ամենավստահ
- 4. ամէնատատ
- 5. անասականարար
- 6. անկործանելի
- 7. անհարնացեալ
- 8. անուանագրութիւն
- 9. անսխալաստեղծ
- 10. ապաձեռնօք
- 11. աստեղանիչ
- 12. աստուածայնապէս
- 13. արարչատես
- 14. արփիանկարք
- 15. աւետատու
- 16. բազկատարածութիւն
- 17. բազմաստեղուն
- 18. բարեբանական
- 19. բարձրագումբէթ
- 20. գեղապարունակ
- 21. գեղատխուր
- 22. գնդակահրաշ
- 23. գոյացող
- 24. եգիպտակործան
- 25. եղեմատունկ
- 26. երգաբանեալ
- 27. ելթնաճրագ
- 28. ելթնաստեղեան
- 29. դիտապետ
- 30. եկատրիլ
- 31. հրանաշակ
- 32. թանձրասփիտ
- 33. թեւասքողեալ

- 80. արփիակերպ
- 81. բազկատարածություն
- 82. բուրվատամբարձեալ
- 83. գեղատխուր
- 84. դառնաճաշակ
- 85. երկրակշռություն
- 86. զանծայրափակ
- 87. զառեցեալ
- 88. զեռահրաշ
- 89. զուարճաբոյսք
- 90. էացեալ
- 91. թեւասքողեալ
- 92. ինքնախորհող
- 93. լուսածին
- 94. կանխապատմություն
- 95. համաշխարհակործան
- 96. հոգեպայծառ
- 97. ճոխացուցիչ
- 98. միակնություն
- 99. առաքելախումբ
- 100. յեռանձնաթիւ
- 101. պարկեշտասնունդ
- 102. քառավտակ
- 103. քոյիմակրօն

**ՍԵՐԱՍՏԻԱՅԻ «ՀՈՂԴԱՐ» ԾԱԲԱԹԱԹԵՐԹԸ
(1910-1914 թթ.)**

Մարիամ Յովսեփեան

«Հողդար» շաբաթաթերթը լոյս է տեսել Սեբաստիա քաղաքում 1910-1914 թթ.: Հրատարակուել է շաբաթ օրը եւ ունեցել է 4 էջ ծաւալ: Հիմնադիր խմբագիրը եւ արտօնատէրն ու տնօրէնը Կ. Ա. Պարսամբեանն էր (1914 թ. Հ. Մ. Փոլադը): Պարբերականը «Հողդար» էր անուանուել Սեբաստիայի Հողդար կոչուող բլրակի ստորոտում գտնուող համանուն թաղի անունով:

1910 թ. հոկտեմբերի 27-ի առաջնորդող խմբագրականում հաւաստիացուում էր, որ թերթը խորհրդանշելու էր սվազդիների հողը եւ հայութեան դարը¹: Դա պիտի լինէր մի դարաշրջան, երբ հայը «գլուխ մը սոխի փոխարէն» չպիտի տար իր հողը եւ փարելով արօրին՝ պիտի շէնացնէր հայրենիքը²: «Հողդարը» փորձելու էր գտնել եւ ընթերցողներին ներկայացնել նախորդ բռնապետական շրջանում անգամ իրենց ազգօգուտ ձեռնարկներով աչքի ընկած անձանց: Թերթը պիտի աշխատէր ստեղծել «քաղքիս մէջ գէթ, երիտասարդութիւն մը՝ գործունէութիւնով, կեանքով առլի: Ան՝ պիտի փարի հողին մշակին հետ: Ան՝ պիտի փառաբանէ գործը ու գործաւորը: Ան՝ Վօլթէռի հետ պիտի երգէ՝

«Իմ աստուածս վաստակն է,
Որ այս աշխարհը կը վարէ»³:

Խմբագրակազմը ցանկանում էր «Հողդարը» դարձնել այնպիսի պարբերական, որի էջերում իւրաքանչիւր հայ կը

գտնէր իր համար օգտակար որեւէ նիւթ: Խմբագրակազմը նաեւ հաւատում էր, որ կարողանալու էր յաղթահարել դժուարութիւնները եւ արգելքները, քանի որ լցուած էր պայքարի մեծ կորովով⁴:

«Հողդարը» ՀՅԴ համակիր պարբերական էր՝ գրեթէ պաշտօնաթերթի կարգավիճակով: Չկար որեւէ համար, որտեղ չլինէր որեւէ նիւթ ՀՅԴ Սեբաստիայի կոմիտէի այս կամ այն ձեռնարկի, որոշումների կամ որեւիցէ յայտնի դաշնակցական գործչի մասին: 1914 թ. «Հողդարի» դաշնակցական ուղղուածութիւնն ակնառու էր դառնում, եւ օսմանեան խորհրդարանի ընտրութիւնների թէ՛ շրջանում թերթը բացայայտ պաշտպանում ու գովազդում էր ՀՅԴ թեկնածուներին եւ դաշնակցութեան որդեգրած քաղաքական գիծը:

Հրատարակութեան 4 տարուայ ընթացքում «Հողդարը» կարողացել է պահպանել ազգային թերթի դիմագիծը եւ հիմնականում ունեցել է կրթական-մշակութային ուղղուածութիւն՝ բարձրաձայնելով արեւմտահայ դպրոցական համակարգի թերութիւնները եւ հայեցի կրթութիւնն ու դաստիարակութիւնը համարելով ազգապահպանութեան հիմնական միջոցը: Այդ հիմնահարցերին էր նուիրուած պարբերականի խմբագրականների մեծ մասը, որոնք իրենց կայուն տեղն էին գտնում առաջին էջում:

«Հողդարը» առաջին եւ երկրորդ էջերում գետեղում էր դաւառահայ գրողների գրական-գեղարուեստական ստեղծագործութիւնները կամ տպագրում էր վերլու-

¹ «Հողդար», Սեբաստիա, 1910, թիւ 1:

² Նոյն տեղում:

³ Նոյն տեղում:

⁴ Նոյն տեղում: